**ՏԵՂԵԿԱՆՔ**

**(Քրեական դատավարության օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ)**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Ընդունված է 2021 թվականի հունիսի 30-ին

**Հոդված 232. Տեղեկատվության պահանջը**

1. Տեղեկատվության պահանջը քննիչի գրավոր դիմումն է վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունների տիրապետող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձին կամ ցանկացած այլ կազմակերպությանը:

2. Տեղեկատվության պահանջը պարտադիր է դրա հասցեատիրոջ համար, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) հայցվող տեղեկությունն օրենքով պաշտպանվող գաղտնիք է.

2) լրատվական գործունեություն իրականացնողը կամ լրագրողը չի ցանկանում բացահայտել տեղեկատվության աղբյուրը.

3) պահանջվում են առանձին փաստաթղթեր, առարկաներ կամ այլ նյութեր.

4) անձը ենթադրում է, որ դա հետագայում ողջամտորեն կարող է օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականի:

3. Հսկող դատախազի կողմից հաստատված քննիչի որոշմամբ կարող են պահանջվել նաև բաժանորդային տվյալները:

3.1. Բացառապես դատարանի որոշմամբ կարող են պահանջվել փոխանցվող տվյալները:

4. Հեռախոսային հաղորդակցությունն սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և նրանց տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալները կարող են պահանջվել՝

1) այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր.

2) մեղադրյալի նկատմամբ.

3) տուժողի կամ վկայի նկատմամբ, եթե դա անհրաժեշտ է նրա ցուցմունքը ստուգելու համար.÷

4) անձի անհայտ կորելու փաստով «Ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ անհայտ կորած անձի հետախուզման մասին դիմում ներկայացված լինելու և միաժամանակ քրեական վարույթ նախաձեռնված լինելու դեպքում՝ նշված օրենքով նախատեսված անհայտ կորած անձի նկատմամբ:

4.1. Ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ բաժանորդի և օգտագործողի մուտքային և ելքային զանգերը (հաղորդագրությունները), հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակը, համացանցային հաղորդակցության, այդ թվում՝ համացանցային հեռախոսային հաղորդակցության և համացանցի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում՝ համացանցային հեռախոսազանգերի մուտքային և ելքային զանգերը կարող են պահանջվել, եթե համապատասխան տվյալները վերաբերում են՝

1) այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր.

2) մեղադրյալին.

3) այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ մեղադրյալը պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել նրա հետ.

4) այն իրավաբանական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից:

5. Հայցվող տեղեկությունը քննիչի սահմանած ժամկետում տրամադրվում է տեղեկանքի ձևով, որը, որպես հավելված, կցվում է տեղեկատվության պահանջի արձանագրությանը:

***(232-րդ հոդվածը խմբ., լրաց., փոփ. 24.10.24 ՀՕ-393-Ն)***